


U57P

Eng sprachl



Հայոց բնագավառ
1918 թվական
30 MAY 2011

ՀՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՅՐՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

891.542-93-2. № 2.

U-39

ՍԵՅՐԻ

ՆՈՐ ՎԱՐԺՈՒՀԻՆ

Կոմիջիա մէկ արարածով



ԹԻՖԼԻՍ
ԿՐԵՄՈՎԱԾ. ՕՐ. Ն. ԱՂԱՄԵԽԻ, պոլից. 7
1912



18.09.2013

12679

891.542-93

0-39

ԱՐ

ՆՈՐ ՎԱՐԺՈՒՅԻՆ

Կոմեղիա մէկ արարտածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Տիկին Արշամեան		
Ղումաշ	13	ատրեկան
Սուրաթ	11	"
Խումար	10	"
Շովիկ	18	"
Վարդգչու	13	"
Օք. Մափրազեան		

38729
Հ/Հ 36

Բեմը ներկայացնում է առանձնասենեակ: Աջ կողմից՝
գուռ, նրա զիմաց, ձախ կողմում, մէկ պատուհան, սլ-
րա մօտ քառանկիւնի սեղան ծածկւած սփոցով,
վրան՝ գասական այլ և այլ պիտոյքներ: Դիմացի պա-
տի տակ զրբերի պահարան զրբերով: Երեկոյեան ժամի
հինգն է:

ՑԵՍԱԲԱՆ

ՂՈՒՄԱՇ, ՍՈՒՐԱԹ եւ ԽՈՒՄԱՐ

(Վարագոյքը բարձրանալիս սեղանի մօտ Սուրաթը
ոտանառը է սովորում, Խումարը արտազրում է զրբ-
րից, իսկ Ղումաշը թիւ հեռու առանձին նառած զիրը
է կարդում: Մի բոլքէ այսպէս պարապում են):
ՍՈՒՐԱԹ (ծածկելով զիրը եւ որափի վեր կենալով).

Ես արդէն ոտանառուս անզիր սովորեցի...



Միւս դասերս էլ բոլորը պատրաստ են... (պրտըտելով): Հիմա ես ազատ եմ...
ԽՈՒՄԱՅ.

Ես էլ ահա պրծայ... շուտով վերջակէալ
կը դնեմ... ահա հա հա... (շոնչը պահելով և յետոյ լիրը շնչելով) Դրի...

ՍՈՒՐԱԹ.

Ի՞նչ անենք:

ՂՈՒՄԱՅ (նստած տեղից).

Ի՞նչ պիտի անենք. շուտով վարժուհին կը
դայ (շարունակում է կարդալ),
ՍՈՒՐԱԹ.

Իսկապէս, այսօր նոր վարժուհի է գալու:
ԽՈՒՄԱՅ (շրացնելով տետրը).

Տեսնես՝ ինչպէս կը լինի նոր վարժուհին,
ՂՈՒՄԱՅ (փակելով զիրը և վեր կենալով).

Ինչքան որ լաւ լինի, մեր հին վարժուհուց
լաւ չի լինի:
ԽՈՒՄԱՅ

Ափսոս գնաց, էնողէս լաւն էր. ինձ միշտ
ասում էր «սիրունիկ»:
ՍՈՒՐԱԹ.

Բայց անպիտան Վարդպէսը ինչպէս ճիշտ
նրա նման ասում է (ձևացնելով և շոյելով լուսա-
րի մազերը) «Սիրունիկ» (ծիծաղում են).
ՂՈՒՄԱՅ.

Իսկ ինչպէս ճիշտ նրա նման ասում է
(ձևացնելով շատ ընթոյշ) «այն», «շատ ճիշտ է,
շատ ճիշտ է»...

ՍՈՒՐԱԹ (վրա տալով).

«Սխալւեցիր, չարաճճի»...

ՂՈՒՄԱՅ.

Եւ ինչպէս ճիշտ նրա նման քայլում, ծի-
ծաղում է...

ԽՈՒՄԱՅ (շտապ եւ թեւելով պարզելով նրանց ստաջ).

Իսկ ինչպէս ճիշտ նրա նման աչքերը կո-
ցում է (ձևացնում է վիզը ծգած, աշքերը փոքրա-
ցրած ու կրցելով. ծիծաղում են),

ՍՈՒՐԱԹ (ընթոյշ),

Իսկապէս ինչ սիրելի էր մեր վարժուհին:
Քիչ հեռւից որ ահմում էր մեզ, աշքերն էսպէս
էր անում (ձևացնում է կրցելով աշքերը),
ԽՈՒՄԱՅ (որպան).

Վարդպէսը ճիշտ նրա նման է անում:
ՂՈՒՄԱՅ.

Շատ անպիտան տղայ է:
ՍՈՒՐԱԹ.

Սատանայ օյինբազ է:
ՂՈՒՄԱՅ.

Ամենքին ծաղրում է:

ԽՈՒՄԱՅ. (միշտ մի տեսակ ծիծաղելով).

Հայրիկը նրան ասում է չարաճընի: (Պատուա),
ՂՈՒՄԱՅ (յանկարծ ծիծաղում է եւ ծիծաղելով).

Անցեալ օրն էլ հնալով յանկարծ ներս է
լնկել թէ՝ «գիտէք ի՞նչ. քաղաքի բոլոր կատու-
ները խելագարւում են» (Ամենքը ծիծաղում են),

ԽՈՒՄԱՅ (ծիծաղի միջից).

Հա ճիշտ, ճիշտ, ասում է հիմա ճեր կատուն
էլ կը խելագարւի...

ՍՈՒՐԱԹ (հետաքրքիր).

Ե՞րբ էր, ե՞րբ...

ՂՈՒՄԱԾ.

Անցնալ օրը, դու տանը չէիր... Յետոյ զիտե՞ս ինչ արաւ անպիտանը.
ԽՈՒՄԱԾ (ծիծաղելով).

Հա...

ՂՈՒՄԱԾ (շարունակելով).

Բոհեց կատւին, ծածուկ մի թղթի կծիկ թելով կապեց պոչին ու ցած թողեց...
ԽՈՒՄԱԾ (տաստիկ ծիծաղելով ու վրա տալով).

Կատուն սկսեց պարտւել, որ բանի կծիկը. ինչքան պըտրտւեց, չըկարողացաւ...
ՂՈՒՄԱԾ (շարունակելով).

Ծիծաղելուց մեւանք, Խեղճ կատուն հով պէս արագ պըտրտւում էր պոչի շուրջը... ինքան պարտւեց, պարտւեց, յոգնեց ու պառկեց... (ծիծաղելով միշտ). Պառկել է հիմա, պոչը շարժում է, կծիկն էսպէս (ձեռորվ ձեւացնում է) դնում դալիս է, խակ կատուն զարմացած նայում ու մոմում է...

ԽՈՒՄԱԾ.

Յետոյ մէկ էլ վեր թռաւ ու էլի սկսեց պարտւել... ինքան ծիծաղեցինք... Մայրիկը ծիծաղելուց թուլացաւ...

ՍՈՒՐԱԹ (ամբողջ ժամանակ ծիծաղելով ու հետաքրքիր լաելով).

Յետոյ, յետոյ...

ՂՈՒՄԱԾ.

Ին անպիտանն էլ միշտ կանչում էր «խելագարւեց, խելագարւեց, ճիշտ այդպէս է լինում»... քիչ մնաց հաւատայինք:

ՍՈՒՐԱԹ.

Ա՛խ այդ անպիտանը, մէկն էլ լինէր դրա պոչից թուղթ կախէր, նա էլ կատւի պէս պարտւէր ու մի լաւ ծիծաղէինք վրան:

ՂՈՒՄԱԾ.

Կարծում ես չի կարող կատւի պէս պառյա գալ... ինչ որ տեսնում է՝ իսկոյն նմանեցնում է...
ԽՈՒՄԱԾ (ծիծաղելով).

Նոր վարժուհու նման էլ կանի...

ՍՈՒՐԱԹ.

Հա, տեսնես նոր վարժուհին էլ ինչ ծիծաղելի բաներ կունենայ:

ՂՈՒՄԱԾ.

Ամեն մարդ էլ մի ծիծաղելի բան կունենայ:

ՍՈՒՐԱԹ.

Բայց վարժուհիների ծիծաղելի բաներն էլ գեղցիկ ու սիրելի են... ինչու վարժուհիներն էտպէս լաւ են լինում:

ԽՈՒՄԱԾ (լրջանալով).

Հայրիկն ասում է, որ վատ, կոպիտ վարժուհիներ էլ են լինում:

ՂՈՒՄԱԾ.

Ասուած անի մեր նոր վարժուհին վատ չը լինի:

ԽՈՒՄԱԾ.

Եթէ վատ լինի...

ՂՈՒՄԱԾ (վրա տալով)

Դասերս չենք սովորի:

ՍՈՒՐԱԹ (վրա տալով)

Գլուխն օյին կը հանենք:

ԽՈՒՄԱՐ (վրա տալով).

Տնից դուրս կանենք... (ծիծաղում են).

ՂՈՒՄԱՇ (յանկարծ).

Վայ, ես գնում եմ Հայկանուշի մօտ, իսկ Կոյն կը դամ (սեղանի վրա վնասում է մի տետր):
ՍՈՒՐԱՅ.

Հիմա վարժուհին կը դայ:

ՂՈՒՄԱՇ (խառնելով զրբերը եւ տետրերը).

Ուր է... ԶԷ, դեռ վաղ է... (բարձր կանչուէ). Ծովիկ, ժամը քանի՞սն է:
ՍՈՒՐԱՅ.

Ինչու համար ես գնում Հայկանուշի մօտ:

ՂՈՒՄԱՇ (շտապով).

Աստղիկը Երևանից եկել է... (գտնելով տետրը եւ ոլրելով) Համ էլ էս տետրը պիտի տամ:
ԾՈՎԻԿ (ներս մտնելով).

Մէկ քառորդ բանել է վեցին:
ՂՈՒՄԱՇ.

Վարժուհին վեցին պիտի դայ (ղիմելով դէպի դուռը) ես իսկոյն կը դամ:

ՍՈՒՐԱՅ (արագ).

Ես էլ եմ գալիս Աստղիկին տեսնելու:
ԽՈՒՄԱՐ (արագ).

Ես էլ, ես էլ:
ՂՈՒՄԱՇ (դրան մօտ ծովիկին).

Սենեակը մի լաւ կարգի բեր, վեցին վարժուհին գալու է (շտապ դուրս են զնում):

ՏԵՍԱՐԱԿԻՆ ॥

ՃՈՎԻԿ մենակ

(Կարգի ղնելով սեղանի վրա զրբերը, տետրերը եւ հաւաքելով զետնից թղթի կտորտանքը).

Զարմանալի աղջիկներ են. օրը տասն անգամ սրանց զրբերը, տետրակները, սրանց սենեակը պէտք է կարգի բերեմ... Մի տուն կառավարեն աւելի հեշտ է, քան սրանց սենեակը օրը տասն անգամ կարգի բերելը... (Աւելի բարկացած). Տես, տես, տետրերն ինչպէս խառնել են, կեղասոս զրիչները դէս-դէն են զցել... Իրանց զրբերն էլ մի կարգի չեն բերում... Մի օր որ էս տանն աղախին չը լինի, չեմ իմանում սրանք ինչ պիտի անեն... Վայ էն աղքատին, որ հարուստի աղջիկ պիտի առնի... Սրանք խօս կին չեն լինի, խանում-խաթուն կը լինեն... (Հասմ՝ է զանգի ծայն. շտապ կարգի բերելով վերջին աթոռները). Ո՞վ կը լինի... Վարժուհին չը լինի... (շտապ դուրս է զնում, բեմը մի ըոսէ մտում է դատարկ):

ՏԵՍԱՐԱԿԻՆ ॥

ՎԱՐԴԻԿԵՍ (Ներս է մտնում ծովիկի հետ աշակերտական զգեստով, զիմարկը դուդած, Առաջ է զալիս անհանգիստ շարժումներով).

Բաս ի՞նչ անենք հիմա, Ծովիկ, էստեղ ոչ ոք չը կայ...

ԾՈՎԻԿ (համարձակ ու ազատ).

Հիմա օրիորդները կը դան:

ՎԱՐԴԳԵՍ

Իսկ մինչև նրանց գալը... սատանաների հետ
խօսեմ, ի՞նչ է... (ման է զալիս: Փորր պատվա,
յանկարծ դառնալով ծովիկին) Ծովիկ, արի մուկ
ու կատու խաղանք...
ԾՈՎԻԿ (ծիծաղելով եւ որսիս):

Ես կատուն

ՎԱՐԴԳԵՍ

Հա ի հարկէ, դու մեծ ես, պէտք է կատու
լինես: Բայց եթէ ինձ բռնես, կարմր ես ուտել...
ահոնեմ ատամներդ:

ԾՈՎԻԿ (ձեռները ետեսում դրած մօտ է զալիս ու
ատամները ցոյց տալիս):

ՎԱՐԴԳԵՍ (Նայում է ու ծիծաղելով):

Ետ ատամներով իսկի մածուն էլ չես կա-
րող ուտել: (յանկարծակի ետ բաշւելով) Ծովիկ,
մուկը, մուկը (ցոյց տալով ոտիղ նրա ոտների
տալ):

ԾՈՎԻԿ (վախեցած ճշում ու ետ է թուշում):

ՎԱՐԴԳԵՍ (ծիծաղելով):

Ի՞նչու չը բռնեցիր, ատամներդ կը փորձէ-
իր: Բա ի՞նչպիսի կատու ես...

ԾՈՎԻԿ (հանգստանալով):

Ի՞նչ անպիտանն ես գու, վախեցայ,
ՎԱՐԴԳԵՍ (խեղճ ձեւանալով ու վիզը ծոելով):

Ծովիկ, ես անպիտան եմ:

ԾՈՎԻԿ.

Հա, դու անպիտան ես. բոլորը քեզ ասում
են անպիտան, օյինբազ, սատանայ, չարաճըի,
էլ ինչ ուզես...

ՎԱՐԴԳԵՍ (էլի նոյնալէս):

Ծովիկ, Ծովիկ, ով է ասում, հա, Ծովիկ...
ԾՈՎԻԿ,

Բոլորը, բոլորը, հայրիկը, մայրիկը. օրի-
որդներն էլ քիչ առաջ ասում էին, որ գու ան-
պիտան, օյինբազ աղայ ես...

ՎԱՐԴԳԵՍ (բարկացած ձեւանալով):

Մինչև անգամ օրիորդներն էլ... (ման զա-
լով) Լաւ, հիմա թող գան, տես թէ նրանց գլխին
ինչ օյին բերեմ... Մի մարդ չկայ ասի, ի՞նչ
օյինբազութիւն եմ արել...

ԾՈՎԻԿ.

Հա, չես արել... Հէնց հիմա ինչու ինձ վա-
խեցրիր:

ՎԱՐԴԳԵՍ (ծիծաղելով եւ շողոքորթ):

Ծովիկ, ախր ես ի՞նչ մեղաւոր եմ. դու կա-
տու դարձար, ուզում էիր. մուկ բռնել, ես էլ
քեզ մուկը ցոյց տւի (ծիծաղում են):

ՎԱՐԴԳԵՍ (շարունակում է):

Ծովիկ, Ծովիկ, դու շատ լաւ աղջիկ ես.
ախկինը միշտ քեզ գովում է, ասում է «Ծովիկը
շատ լաւ աղջիկ է»...

ԾՈՎԻԿ (կարմրելով):

Լաւ, գիտեմ, գիտեմ...

ՎԱՐԴԳԵՍ.

Ծովիկ, արի հաշտւենք (Չեռքը մէկնում է,
ծովիկը տալիս է ձեռքը: Դառնալով ու ման զալով):
Հիմա լաւ է ամեն ինչ, բայց որ օրիորդները չե-
կան:

ԾՈՎԻԿԻ.

Նրանք անողոտամառ շուտով կը գտնի. Այսօր
նոր վարժուհի է գտնու:
ՎԱՐԴԳԻՍ (կանգնելով).

Նոր վարժուհի... Էն վարժուհին գնաց. յի-
շում ես, որ միշտ էսպէս էր անում (կլոցում է
աշքերը. ծիծաղում են):

ԾՈՎԻԿԻ.

Հա, օյինբազ. տեսնես նոր վարժուհու վրա
էլ ինչ կը գտնես, որ ծաղրես:

ՎԱՐԴԳԻՍ (Անհանգիստ ման զալով).

Տէր Աստւած, սրանք ինձ օյինբազ են ա-
ռում... Հա, ինչ անեմ... Օյինբազ եմ. բաս ա-
րի մի լաւ օյին սարքեմ (Կանգնում, մի րոպէ
մտածում է՝ անհանգիստ զլուկը բորելով). Լաւ, օ-
յինբազ հօ օյինբազ... (Ծովիկին քաղցրութեամբ).
Դու էլ օրիորդներից սովորեցիր ինձ օյինբազ ա-
սել համ... Բաս, Ծովիկ, ինչ կը լինի—լինի, արի
էսօր օրիորդների զլիխն մի լաւ օյին խաղանք...

ԾՈՎԻԿԻ (ծիծաղելով).

Հօ սուտ չեն ասում, որ օյինբազ ես... ինչ
պիտի անես էլի...

ՎԱՐԴԳԻՍ

Գիտես ինչ, Ծովիկ, (Մտածում է). Դու տե-
սել ես նոր վարժուհուն:

ԾՈՎԻԿԻ.

Զէ,

ՎԱՐԴԳԻՍ.

Խսկ օրիորդները,

ԾՈՎԻԿԻ.

Նրանք էլ չեն տեսել. Այսօր առաջին ան-
գում պիտի գայ: ՎԱՐԴԳԻՍ.

Էտ լաւ է. գիտես ինչ, Ծովիկ. (Մտածում
է. յանկարծ). Ե՞րբ պիտի գայ վարժուհին:
ԾՈՎԻԿԻ (հետաքրքիր ու ժպտալով).

Վեցին, դեռ կէս ժամ կայ:

ՎԱՐԴԳԻՍ (հրճնելով).

Շատ յարմար է (Հարցական նայելով ծովի-
կին). Գիտես ինչ պէտք է անել, Ծովիկ:
ԾՈՎԻԿԻ (հետաքրքիր).

Ի՞նչ պէտք է անես:

ՎԱՐԴԳԻՍ.

Միասին պէտք է անենք... Դու պէտք է
շուտով ճարես, գիտես ինչ, Ծովիկ...
ԾՈՎԻԿԻ (լարած).

Ի՞նչ...

ՎԱՐԴԳԻՍ.

Կնոջ շորեր...

ԾՈՎԻԿԻ (մի վայրկեսն մտածելոց յետոյ, սաստիկ
ծիծաղելով ու կողերը բռնած՝ ծիծաղի մջից).
Վարժուհի ես ուզում ձեանալ...

ՎԱՐԴԳԻՍ (ծիծաղելով).

Հա. (ծիծաղում են):

ՎԱՐԴԳԻՍ.

Դէ շուտ, Ծովիկ, չուշանանք:
ԾՈՎԻԿԻ.

Դմ տօն օրւայ շորերս կը բերեմ...

ՎԱՐԴԳԻՍ.

Հա, հա. (ոտները խփելով գետնին). Դէ շուտ,
շուտ:

ԾՈՎԻԿԻ (ծիծաղելով վազում է զուրս).
ՎԱՐԴԴԳԵՍ (ժապտադէմ՝ մոռածելով եւ արագ-արագ
 ըրջելով).

Ինձ օյինքաղ են ասում համա՞։ անոլիսան
 աղջիկներ... Օյինքաղութիւնը նոր կը լինի, դուք
 հալու սպասեցէք (կանգնում է երեսը դէսի դուռը,
 ուննիրն անհանգիստ շարժելով ու ինըն իրան),

Ծովիկ, շուտ արա, Ծովիկ,

Շորերը բեր՝ դասնամ կնիկ,

Աղջիկներին պատճեմ սասախիկ։

ԾՈՎԻԿԻ (շտապ ներս է մտնում, շրիբը ձեռքին).

Ահա. (ըրջազգեստը զցում է աթոռին, կօֆտան
 պահում է). դէ հագիր։

ՎԱՐԴԴԳԵՍ (շտապ առաջ է գնում ու տեղումը խա-
 ղարվ հազնում է։ Մինչդեռ ծովիկը ետեփց կրնկում է)

Շուտ, շուտ, շուտ...

Էսօր դժւար դաս է,

Աղջիկների բանը թարս է։

ԾՈՎԻԿԻ (միշտ ծիծաղելով, վերցնում է ըրջազգեստը
 զցում է շտապ վարդգէսի զիմին ու սկսում է ամ-
 րացնել)։

ՎԱՐԴԴԳԵՍ.

Աղջի վարդգէս,

ծամդ կտրես։

ԾՈՎԻԿԻ (վերջացրած ու յանկարծ ծիծաղելով հիա-
 մուտափած)։

Բա մաղերդ, Վարդգէս, դէմքդ...

ՎԱՐԴԴԳԵՍ (նայելով շրիբին).

Հէ, դու հանգիստ կաց, Ծովիկ, ամեն ինչ
 մտածել եմ։ (շտապ) Գիտես ինչ, էս վերեի կե-
 նողների օրիորդը, Սառան, գիտեսու..

(իշխանութիւնը պիտի ծովիկ է հայութ և նոր
 վահանակ է ներսով ունենալ ինչեւ իրավակ և
 ամուս... այս ՎԱՐԴԴԳԵՍ (շատ-շտապ), այս և անձնու-
 թիւանդացն էր, մաղերը կտրել են, հիմա
 չկտրացն է ծածկում. մի քանի հատ ունի. ան-
 պատճառ մէկը կը խնդրես իսկոյն և կը բերես.
 կասես, որ ուզում ես նման մէկը կտրել... շուտ...
 (ծովիկը ծիծաղելով վազում է. Վարդգէսը ետեփց
 ասում է) Տիկնոջ հին ակնոցն էլ հայելու առաջ
 տեսայ. այն էլ բեր (ծովիկը մի վայրկեան լուս
 ու վազում է)։

ՏԵՍԱՐԱԿ Ա

ՎԱՐԴԴԳԵՍ մենակ եւ յետոյ ծովիկ

(ծիծաղելով առաջ է զալիս, նայում է իրեն ոսից
 զլուի)

Խաչ որ կատարեալ օրիորդ եմ; ոչինչս պա-
 կաս չէ... (կոկնտարար հասարելով ըրջազգեստի պո-
 շը եւ վրւած բայլերվ) Էսպէս են քայլում... (շփոթ-
 ում) չի կարողանում լսու բայլել) Էս ինչ անոլիսան
 բան է եղել աղջիկ լինելը... ես որ աղջիկ լի-
 նէի, սիրառ կը ճաքէր... (ալառզա) Ի՞նչպէս են
 ման գալիս էս յիմար շորերի մէջ... Հիմա որ
 ուզենամ վազ տալ, կարսղ եմ... Հապա մի փոր-
 ձեմ (վազում է դէսի բեմի խորը և ետ դառնալիս
 փոսում է յատակին երեսի վրա... Ընկած տեղից).
 Ֆռւ... ինչ յիմարութիւն է էսպէս շորեր հագ-
 նելը... (վերէ կենում բռնելով արմունկը) Օ՛ֆ թևս...
 (զարով առաջ) Օրիորդները շուտառվ կը գանի (ուղ-

դում է հազուսոր եւ ապա զբովը բարձրացնելով՝
ի հարկէ կնոջ ձայնով պիտի խօսեմ... Հապա մի
փորձեմ... (վործում՝ է կոպիտ) «բարե... նստե-
ցէք... ինչպէս կարելի է այդպէս դաս պատաս-
խանել... չեն ամաչում...» (ծիծաղելով) ԶԵ, բաւ
է, ամեն բան աշող կերթայ...

ԾՈՎԻԿ (շատագ մտնում է ծիծաղելով).

ԲԵՐԵԳԻ (ծածկում՝ է չեփչիկը նրա զվարին եւ
թիւ հեռանալով սկսում է սաստիկ ծիծաղել):

ՎԱՐԴԴԻԿ.

ՀԵ, յարմարւում է:

ԾՈՎԻԿ (ծիծաղի միջից).

ՀԻԱՆԱԼԻ է:

ՎԱՐԴԴԻԿ.

ՊԵՆԱՐՆԷՆ էլ մի տուր տեսնեմ (ստանում ու
դնում է թթին): Հիմա հօ ամեն ինչ կատարեալ է:
ԾՈՎԻԿ (ծիծաղելով).

Ամեն ինչ կատարեալ է... Վայ ձեզ, աղ-
ջիկներ...

ՎԱՐԴԴԻԿ.

Լաիր, ԾՈՎԻԿ, չէ որ ես կնոջ ձայնով պէտք
է խօսեմ. ենթադրենք թէ դու աշակերտն ես, աես-
լաւ եմ խօսում (փործում է կոպիտ). «Հապա տես-
նենք... Օրիորդ, ի՞նչ էք անցել հայոց լեզւից...
ի՞նչ զիտէք թւարանութիւնից... Իսկ կրօնից ...
աղօթքներ զիտէք»... (ծովիկին) Լաւ է, համ...

ԾՈՎԻԿ (սաստիկ ծիծաղելով).

Սատանայ, օյինբազ Վարդգէս... (լսում է զանզի
ձայն):

ՄԻԱՍԻՆ.

Ահա,

ԾՈՎԻԿ.

ՕՐԻՈՐԴՆԵՐՆ են.

ՎԱՐԴԴԻԿ.

Իէ գնա, ասա, որ նոր վարժուհին եկել սպա-
սում է (ծովիկը դուրս է զնում: Վարդգէսը յան-
կարծ կանչում է). ԾՈՎԻԿ, ԾՈՎԻԿ, (նա ետ է նայում)
շուտով, շուտով մի հատ լրագիր... թախտի վրա
տեսայ:

ԾՈՎԻԿ.

ԻՍԿՈՅՆ, ԻՍԿՈՅՆ:

ՎԱՐԴԴԻԿ.

Օյ, օյ, օյ, սաստիկ ցուրտ է:

Աղջիկների բանը բուրդ է:

(Ստանում է լրագիրը, ետ զալիս, նատում է աթո-
ռին, սեղանից հեռու, քամակը դէսի դրուր, ոտք
գցում է ոտին, լրագիրը բռնում, իբրև թէ լուրջ կար-
դում է):


ՏԵՍԱԲԱՆ Վ.

ՎԱՐԴԴԻԿ, ՂՈՒՄԱՇ, ՍՈՒՐԱԹ, ԽՈՒՄԱՐ եւ
ԾՈՎԻԿ.

(Հանգարտ ու վախվահելով ներս մտնում, անհա-
մարձակ առաջ են գալիս Ղումաշ, Սուրաթ և Խումար:
Վարժուհին անշարժ կարդում է: ԾՈՎԻԿը դոնից զլուխը
ներս պարզած, ձեռքով ծածկել է բերանը՝ ծիծաղը պա-
հելու Աղջիկներն առաջանում ու վարժուհուց քիչ հե-
ռու կանգնում են: Պառզա:

ՂՈՒՄԱՇ (ցածր).

Ես ինչ տեսակ վարժուհի է:
ՍՈՒՐԱԹ,



ԽՈՒՄԱՅ.

Խուլ է:

ՍՈՒՐԱԹ (Գլուխը պարզում նայում է դէմքին և հետաքրքր ու լայն աշքերով դառնում է նրանց ձեռքը պահած բերանի կողքին).

Քոնո է...

ԽՈՒՄԱՅ (Սեղանի ետևից զրոխը պարզում, նայում է դէմքին և շտագ ետ է զալիս ու ժպտալով իրավիլում՝ է).

Քնած է...

ԴՈՒՄԱԾ {Ճիշտ... (բորբը զիմները կամաց-կասուրաթ} մաց մօտեցնում են նայելու. յանկարծ վարժուհին լրագիրը շոտ է տափա. նրանք վախենում են, մի բանի բայլ ետ-ետ փախչում և ծեռները դրած սրտներին, իրար են նայում վախեցած, վարժուհին նորից խորասուզում է ընթերցանութեան մէջ. Աղջիկները կամաց-կամաց մօտենում են):

ՍՈՒՐԱԹ.

Քնած չէր:

ԴՈՒՄԱԾ

Քոռ էլ չէ, լրագիր է կարգում:
ԽՈՒՄԱՅ.

Անպատճառ խուլ կը լինի:
ԴՈՒՄԱԾ.

Ի՞նչ անպիտան զիմարկ է ծածկել: (Մօտենում են, Յանկարծ վարժուհին լրագիրը շոտ է տափա, նրանք ետ են փախչում վախեցած ու շնչները պահած: Շոտով նանգատանում ու էլի տառջ են զալիս):

ԴՈՒՄԱԾ.

Ի՞նչ անենք:
ՍՈՒՐԱԹ.

Ի՞նչ անենք:
ՍՈՒՐԱԹ.



ԽՈՒՄԱՅ.

Ի՞նչ անենք:

ԴՈՒՄԱԾ.

Սա խուլ կը լինի անպատճառ:
ԽՈՒՄԱՅ.

Խուլ վարժուհու հետ ի՞նչպէս պարապենք:
ՍՈՒՐԱԹ.

Ապա սպասեցէք, ես մի փորձեմ, տեսնենք (Հազում է ցածր). Բհը... (Յարձը). Բհը, ընը... (Յանկարծ եւ շափազանց բարձր) Բհը...

ՎԱՐԴԴԻՍ (դէմքը շոտ տալով եւ կնոջ ձայնով ու կրպիտ):

Ետ ովքեր են...

ՆՐԱՆՔ (վախենում եւ մի բոզէ լոտ ու վարժուում իրար են նայում):

ԴՈՒՄԱԾ (անհամարձակ):

Ներեցէք, գուք վարժուհին էք...
ՎԱՐԴԴԻՍ (խիստ)

Այն, ձեզ հետ պիտի պարապեմ:
ԴՈՒՄԱԾ.

Այն:

ՎԱՐԴԴԻՍ (խիստ).

Ես լաւ չի, ես լաւ չի... Ես ձեզ վաղուց սպասում եմ... Հենց առաջին դասից ուշանում էք...

ՍՈՒՐԱԹ.

Բայց օրիորդ... Ժամը վեց...
ՎԱՐԴԴԻՍ.

Լոեցէք, լոեցէք... ուրիշ անգամ չըկրկնուի... (վեր կենալով) Նատեցէք, շնւտ... (նրանք վախվելով նատում են սեղանի շորջը կպած իրար):

ՎԱՐԴԳԵՍ (Նատելով ու նայելով
առաջը՝ սեղանին). ապա կրարար ձայնով,

Ի՞նչ գիտէք... (Նրանք շարած նայում են
իրար եւ լոտ են). Խուլ են կարծես,.., (բղանելով)
Ի՞նչ գիտէք... (Նրանք վախնցած եւ լոտ են) Սրանք
ինչպէս երեւմ է, ոչինչ չըդիտեն, կամ լեզու
չունեն... (Դումաշին) Դուք խօսել գիտէք...
ՂՈՒՄԱՇ.

Այս:

ՎԱՐԴԳԵՍ (Սուրամին).

Դժու...

ՍՈՒՐԱՄ. (վախով).

Այս:

ՎԱՐԴԳԵՍ (Խոսմարին).

Դժու...

ԽՈՒՄԱԲ. (վախով).

Այս:

ՎԱՐԴԳԵՍ (ձեւացնելով).

Այս, այս... Ել ուրիշ բան չըկայ..: Ի՞նչ
գիտէք թւարանութիւնից... (Սուրամին) Դու ա-
սա...

ՍՈՒՐԱՄ. (վախով).

Գիտեմ բոլորը... խնդիրներ գիտեմ վճռել...
Կոտորակներ...

ՎԱՐԴԳԵՍ (կրապիտ).

Կանոնաւոր խօսեցէք... կտորանքներս
մըն են:

ՂՈՒՄԱՇ (մի կողմ).

Էս ի՞նչ կոպիտ վարժուհի է:

ՎԱՐԴԳԵՍ.

Թւարանութիւնից ոչինչ չգիտէք... Ի՞նչ

դիտէք հայոց պատմութիւնից, (Դումաշին) Դուք
պատմեցէք Սրա-Գեղեցիկի մասին
ՂՈՒՄԱՇ.

Սրա-Գեղեցիկը շատ գեղեցիկ աղամարդ էր ..
ՎԱՐԴԳԵՍ (Ծըմէ է).

Ի՞նչ: Սա ի՞նչ վայրենութիւն է, ով է ձեզ
տսել, որ Սրա-Գեղեցիկը աղամարդ էր... Ո՞վ է
լսել, որ աղամարդին գեղեցիկ ասեն ..
ԽՈՒՄԱԲ (մի կողմ).

Էս ի՞նչ տեսակ վարժուհի է:
ՍՈՒՐԱՄ.

Ոչինչ չը գիտէ:
ՎԱՐԴԳԵՍ.

Ի՞նչ է նշանակում այս... Ոչինչ չէք հասկա-
նում... Ապա մի տեսնեմ կրօնից ինչ գիտէք...
(Խոմարին) Մի ասա տեսնեմ, ով էր Յակոբ
նահապետը:

ԽՈՒՄԱԲ (վարանելով).

Յակոբ նահապետը մի չորան էր...
ՎԱՐԴԳԵՍ (բարկացած).

Սա կատարեալ խայտառակութիւն է... Էս
ի՞նչ բաներ են ասում... (Նորից Խոմարին). Ապա
մի «Հայր մերն» ասա տեսնեմ:

ԽՈՒՄԱԲ (վախնցած).

«Հայր մեր, որ երկինս ես... (վիզը ձգած,
թուրք կուլ տալով) Հայր մեր որ երկինս ես... .
ՎԱՐԴԳԵՍ.

Լոիր, լոիր, լոիր... Ոչինչ չըգիտես...
որ թողնեն, մինչև երեկոյ կասես՝ (ձեւացնելով)
«Հայր-մեր, որ երկինս ես, Հայր մեր որ երկինս
ես...»

ՍՈՒՐԱԹ (մի կրողմ).

Սա կատարեալ գիտ է... Գնամ մայրիկին
յայտնեմ...

ՎԱՐԴԻԿԵՄ (հաւաքւելով).

Հիմա ուշադիր եղէք, ես ձեզ պէտք է սով-
րեցնեմ... Նախ սկսենք բնական պատմութիւ-
նից... Հետեւեալ գասին դուք ինձ պէտք է պատ-
մէք՝ մողէսները երբ են թռչում դէպի տաք եր-
կիրները:

ԴՈՒՄԱԾ.

Օրիորդ, մողէսները չեն թռչում...
ՎԱՐԴԻԿԵՄ (զարմացած ու բար-
կացած).

Ի՞նչպէս... Ի՞նչ ասացիք... Դուք համար-
ձակւում էք ինձ բան սովորեցնել... ես ձեզ ցոյց
կը տամ (ոտքի կանգնելով) Մի ասացէք տեսնեմ,
ի՞նչ է ձեր անունը... շնուա...

ԴՈՒՄԱԾ (դողդողալով).

Դումաշ...

ՎԱՐԴԻԿԵՄ.

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ. նորից ասա...
ԴՈՒՄԱԾ.

Դումաշ:

ՎԱՐԴԻԿԵՄ (հոտ-հոտ զեալով աշքերը լայն
բացած, ծեռները վեր բարձրացած ու զարմացած).

Գոմմէշշ... (պատզա) Գոմէշ... Դուք ինձ
ծաղրում էք, հա, ես ձեզ ցոյց կը տամ: (բռնե-
լով թեից) Մի եկ էստեղ չոգիր տեսնեմ... (տա-
նում չողեցնում է սեղանից թիշ նեռու դէմքը կիսու-
վին դէպի հասարակութիւնը եւ կիսովին դէպի սեղանը
դարձած. յեսոյ բարկացած դառնում է խումարին) Իսկ ձեր անունն ի՞նչպէս է:

ԽՈՒՄԱՐ (դողդողալով).

Խումար...

**ՎԱՐԴԻԿԵՄ (մոտեցնելով ա-
կանջը).**

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ... նորից...
ԽՈՒՄԱՐ.

Խումար...

ՎԱՐԴԻԿԵՄ (կատաղած).

Տիւմար... Ինձ տիսմար էք ասում... Տըխ-
մարը դուք էք, ես ձեզ ցոյց կը տամ (բռնելով
ականջից) Արի մի դու էլ չոգիր տեսնեմ... (չո-
ղեցնում է Դումաշի կողըին նոյն ծետով եւ բարկացած
դառնում է Սուրաթին). Իսկ ձեր անունը...

ԽՈՒՄԱՐ (դողդողալով, բայց կարճ).

Սուրաթ...

ՎԱՐԴԻԿԵՄ.

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ:

ՍՈՒՐԱԹ (կարճ).

Սուրաթ...

ՎԱՐԴԻԿԵՄ.

Քուռամկ... (ծեռներն իրար խփելով) Սա ի՞նչ
խայտառակութիւն է, սրանք ինձ ձեռք են ա-
ռել... Ես հիմա ձեզ ցոյց կը տամ... (բռնելով
ականջից): Արի մի դու էլ չոգիր սրանց մօտ
տեսնեմ... (չողեցնում է նրանց կողըին) Էսպէս
մնացէք տեսնեմ... Զեռներդ էլ էսպէս պահեցէք
տեսնեմ (բռնում է ամեն մէկի ծեռները եւ վեր
հանում):

ՆԱԾՆՔ (Չոգած տեղերը աչքերը լայն բաց սրած,
վախեցածի նման շոր ու մոտ զալիս, ծնօտները
տարութերում՝ են ձեռները վեր պահած):
ՎԱՐԴԴՈՒՄ.

Ես ձեզ էսպէս պէտք է ներկայացնեմ ձեր
ծնողներին (լսում է զանգի ծայն։ Ծովիկը շտապ
վազում է։ Վարդզէսը ցնում է, աչքերը լայն բացում
եւ առա ժպտալով։ Ահա նրանք կը լինեն. . . Տես-
նեմ՝ ի՞նչ պատասխան էք տալիս. . . (Դուրս բաց-
ում է, Վարդզէսը բաշտմ կանգնամ է սեղանի տ-
ուած)։

S T U D Y S VI.

ՆՐԱՆՔ, առ ԱՐԾԱՄԵԼԻՆ եւ օր. ՍԱՓՐԱԶԵԼԻՆ.

(Արագ եւ ուրախ ներս են մտնում տիկինը՝ պէնսյոնին ծեռքին եւ վարժուհին, ետեներից ծովիկը ժպտադիմ):

Տիկին.

(Դէմքը դէպի վարժուհին): Յոյս ունեմ, օրիորդ,
որ դուք իմ աղջիկներից գոհ կը մնաք. (յանկարծ
տեսնելով տեսարանը, զարմացած ու ձեռները բա-
նալով): Սա ի՞նչ բան է... (երեխաները մտում են
անշարժ, նայելով Վարդգէսին. տիկինը բարկանումէ):
Սա ի՞նչ վարմունք է... (ցոյց տալով վարժուհուն):
Զեր վարժուհին է, եկել է, դուք այս դրութեան
մէջ էք... (լսելով վարժուհու անոնը, նրանք յան-
կարծ վախեցած վեր են թոշում):

ՀՈՒՄԱՅ.

Աա մեր պարժուհին է...

Shubh

U. S. H. B. Sample:

ՍՈՒՐԱԹ և ԽՈՒՄԱՐ (ցոյց տակով Վարդպէսին):

Ապա նա ով է...

ՏԻԿԻՆ (տեսնելով նրան):

Տէր-Աստւած, սա ի՞նչ բան է... (Ծովիկին)

Ծովիկ, սա ի՞նչ բան է, ովք է նա...

ԾՐՎԵԼԻ (Ճիծաղր փոթկացնելով):

ԶԵՎԻՇԻԿՐ ՀԱՆԵՑԵՔ...

•Ն (quartermaster մօսելու

պէնսիլէն եւ ապշած ես-ետ է քաշում)։

ԲՈԼՈՐԸ.

Ա՛ա... Վարդպէսն է... (սաստիկ ծիծաղում)

ՍՈՒՐԱՅԻ

Օյինըազ անպիտան...


ԽՈԽԱՐ.

Qարաճրճի...

ՂՈՒՄԱԾ

Ահա թէ ով էր նոր վարժուհին (ասում են միաժամանակ ու վազում վարդպէսի վրա, ընդհանուր ծիծաղ),

Ψ u r w q n j r



(*Georgijevskij*) *Imperij* *1890* *100000* *o* *100000*
... *100000*

... *Ardeles* *affinis* *affinis*
... *Ardeles* *affinis* *affinis*
... *Ardeles* *affinis* *affinis*

Անոնց մշտականի զու դժ ին Այ առջեց
այցը՝ այս պահպանի նարսի ո բանականականի
այս առանձին զու

«Հ Ա Ս Ո Ւ Ե Ր Ի Ր Ա Տ Ա Կ Ո Ւ Ի Թ Ի Խ Ն Ն Ե Ր

- | | | | |
|-----|--|----|----|
| 1. | Հեղ. Մելիք-Հայկաղեան, Քսանի օր գեանի տակ | 20 | կ. |
| 2. | Օսկար Ուայլը, Պրինցն ու ծիծենակը | 20 | կ. |
| 3. | Ստ. Լիսիցեան, Բաջ ճամբորդներ | 25 | » |
| 4. | Աթ. Խնկոյեան, Գիւղացին ու արջը | 25 | » |
| 5. | Ստ. Լիսիցեան, Բաջ զինւորներ, պիէս | 8 | » |
| 6. | Ռ. Պատկանեան, Զախու | 20 | » |
| 7. | Ստ. Լիսիցեան, Սոված գայլը | 10 | » |
| 8. | Կաւուիա Լուկաշեիչ, Քեռի Մկօ | 20 | » |
| 9. | Կարլ Էվալդ, Երկիրն ու գիսասաղը | 12 | » |
| 10. | Կապուան, Ֆիօրէ փերին, Ասեղ | 12 | » |
| 11. | Իւանովիչ, Աւոնց Ստեփանը, | 20 | » |
| 12. | Կ. Լուկաշեիչ, Ծաղիկների մէջ | 12 | » |
| 13. | Աթ. Խնկոյեան, Աղէսն ու արջը | 20 | » |
| 14. | Նիկ. Սարգսեան, Կենդանիների գոյները | 15 | » |
| 15. | Բրհո Հարտ. Մլիս. | 12 | » |
| 16. | Է. Միտօն-Տօմպսօն Կախականչիկը | 12 | » |
| 17. | Գ. Շւաբ. Արագոնաւորդները | 25 | » |
| 18. | Աթ. Խնկոյեան, Պատին ու շաղգամը | 12 | » |
| 19. | Կար. Միքիանեան, Մայրը | 12 | » |
| 20. | Յովին. Թուման, Քէֆ անողին քէֆ չի պակսիւ | 20 | » |
| 21. | Պուշկին, Քնած գժխուճին | 20 | » |
| 22. | Ն. Սարգսեան, Թէ ինչու համար է ծաղիկը | 20 | » |
| 23. | Նոյն. Թէ ինչպէս են տարածւում սերմերը | 20 | » |
| 24. | Կարլ Էւալդ. Տասներկու բոյր. | 10 | « |
| 25. | Ֆէրրո. Տօնի համար | 10 | » |
| 26. | Աթ. Խնկոյեան. Փեսացու մուկը | • | • |
| 27. | Աթ. Խնկոյեան. Աղէսն ու Կոռնկը. | 10 | » |
| 28. | Մամին-Միքիրեակ. Ծեր ճնճուկը, ձիճու,
Պառաւ Մոսանի խոստովանքը | 12 | » |
| 29. | Վարդան Վարդանեան. Մասրդն ու Նամարդը | 10 | » |
| 30. | Աթ. Խնկոյեան. Ծիտն ու Արքերը | 5 | » |
| 31. | Էրնստ Սէտօն-Տօմպսօն. Կաղիկ քոթոմիր | 20 | » |
| 32. | Կ. Մ. Ստանիկովիչ, Դայեակը | 20 | » |

4

ՀԱՄԿԵՐ ԱՄՍԱԳԻՒՄ ՄԱՆԿԱԿԵՆ ԹՎԱՏՐՈՒ

1. Ստ. Ղիսիցեան. Պահմլտոցիկ
2. Ստ. Ղիսիցեան. Ազատութիւն
3. Սէյրի. Նոր վարժուհին
4. Սէյրի. Ես իշխան եմ
5. Ստ. Ղիսիցեան. Գաղտնիք
6. Ժորժիկ Մանուչեան. Փնթի
7. Գ. Շահ-Պարոն. Գող—սիրտը դող
8. Ցիկ. Մարգարիտ. Դաստիանում
9. Յ. Քեռուեան և Ստ. Ղիսիցեան. Քեռին
10. Գլազունով. Տիկին Սիրան, փոխ. Կ. Միքիան



ՀՀ Ազգային գրադարան



NL0402784

12679